

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՁԱՆ

ԹԻ 34

19 ՕԳՈՍՏՈՍ 1904

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՎԵՇ. ՍՈՒԼԹԱՆԻՆ
(Խմբագրական)

Նկատողութիւններ. ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ. — Գալիլայեան Ուրանոսի շուրջը (Սյոքրատեսի մը առթիւ) ՏԱԿ. — «Դուազներ» ԵՆՈՎ. — Արմէն. — Աղջկան մը Օրագիրէն Բաղուատ. — ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ. — Լուս պատահանը (Բմայ). ՊԱՐԷՏ. — Խմբագրական Նոթեր. — Զանազանք:

ՊԱՍԿԱՆԻՍ ԵՄ. — Խմբագրական Նոթեր. — Զանազանք:

ՄԱՍԻՍ Շաբաթաթերթի խմբագրական բաժանորդագրիցն է Կ. Պոլսոյ համար Բաղուատի զբոս. Եւ գաւառներուն համար լիստն դրո., կանխիկ վճարելի: Արեւստանման 12 ծրարն կամ 5 ռուպլի: Թղթաստանական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն: ՄԱՍԻՍ հրապարակելի է ամեն շաբաթ անոն: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր: Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր: Խմբագրական Նոթեր. — Զանազանք:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայմաններով: Զանազանք:

Զանազանք:

ԽՐԲԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ
Կ. Պոլս, Դալաթիա
Rédaction de la Revue MASSIS
Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդօյին ներքեւ, երաշխաւորեալ դրամադուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ քոյ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ դադափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիդի՝ Օբէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւ այլն թաղոնները, նաեւ Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թաղոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէրի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսպիրանթիք, Հալլը-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար, Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պօլիս. Մանուտ փաշա, Պէոյիւք երլարդ խան, թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Դրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող աճառատուն մը, Շուկայ Սահաֆար, թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎՂՈՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»-ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՐԷՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏԵՆԷ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղեցիկ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրութեան ԶԵՐԾ ԵՆ այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաղման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՄԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի ՏԵՐԷՆՈՒՔԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Քաթրեք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան: — Դործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

6-10



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄԱՐՈՅԻ

Մուղաթերիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեսպանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, թիւ 16

Զբոսանքան աբադան

Պալպալեան ամէն օր ակոյալի ամէն տեղակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Ներքէ շաբթի մինչեւ ժամը 5: Դիւերուան օր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակոյաները: Ծորեկները ակոյալ քաշելալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կ'ախեալ է: Վկայեալ տառամարութեան Տիկին Բօլին եւս կը գանուի միշտ նոյն դարձանաւ մէջ: Աղբաւներուն ճիւղ 6-10

ԶԱՐԵՀ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ—ԱՏԱՄԱՐՈՅԻ

Վ Կ Ա Յ Ե Ա Լ

ԻՐՈՇԻ ԱՏԱՄԱՐՈՒԺԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԷՆ

Ե Ի

ՊԱՇԵՐԻԷ ԺԵՆԵՎԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԷՆ

Կը բուժէ ակոյալի ամէն տեսակ ցաւեր եւ լինտերու հիւանդութիւններ, կտորեկա-գործեալ սիսթէմներով: Հիւանդ կ'ընդունի ամէն օր, Բերա, Մեծ Փողոց ԲՐԷՏԻ ԼԻՕՆԷԻ Ղիմացը Կլավանի փողոց թիւ 2:

Ներքէ-ըթի եւ Ուրբաթ օրերը մինչեւ ցօրեկ աղքատաց ակոյալ քաշելը ճիւղ է:

5-10

ԲՈՒՆՈՐ ԵՐԱՆՈՅՔ ԵՎ ԶԱՆՆԵՆ

Եսիկայ որոշեալ ժամանակի մը մէջ տեղի կուենայ, անոնցմէ շատերը՝ սաստիկ ցաւօք և անհանդստութեամբ կը հանեն: Ուստի պէտք է տրուի մանուկներուն:



SCOTT'S EMULSION

որոնք ակոյ հանած ատեննին՝ բոլոր ցաւերէ և աղետներէ զանոնք կը իրկէ:

ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱՅՐՈՒԹԻՈՒՆ

տղայական վիշտերու մէջ համար՝ շատ կարևոր տղայական դեղ մըն է: անոնց կատարեալ անողջութիւն կուտայ և զանոնք նոյն վիճակի մէջ կը պահէ: Թող Ձեր զաւակները անողջ և զօրաւոր մեծանա շնորհիւ:

ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱՅՐՈՒԹԻՈՒՆ:

ԲՆԱՅՐՈՒԹԻՈՒՆ ԵՎ ԲՆԱՅՐՈՒԹԻՈՒՆ:

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի-մալուրեան եւ նորագութեան (Գրասենեակ՝ Մանգաւ—իւշա, Թարագճըլար, Մեծ Նար կանի կից, Թ. 37)

Այս հանրաժանութիւնը գործարանին մէջ կը սաքուին ազատեալ եւ փոքր թէ՛ մեծաք սէ եւ թէ՛ բարձր ամէն տեսակ ընտիր գորգեր, ընտիրական դեղորէից միջոցաւ, առանց ո՛ր եւ է արտաւ կամ հեաք ծղելու: Ընդհակառակը, բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ առանելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է՝ թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը զերծ կը մնան ցեցերու (կիւղէ) կեր ըլլալէ:

Կը նորագութեան նաեւ քրեւէ կերպով մը առանց գորգեր:

Սոյն գործարանը կը գտնուի նաեւ պաշտասան նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու ճաշակով որ եւզուի:

Յանձնարարութիւնը պէտք է ուղուին գրասենեակը:

Դիւրամաշելի պոյմաններ:

6—10

ԱՂԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամէն տեսակ քոհափիէ ապրանքաց

Մեծ-Նուկայ, Բիւրճիկերու դրան կից, Թ. 41—43

Նայեալէս, արանց եւ կանանց ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պոլիս, Սուլթան—Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները թէ՛ թօհափիէի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յաւուկ հովանոցներ իրենց զեղեցկութեան կը միացնեն անկողնութիւն, եւ զիրարմատ չելի գիններու առանելութիւնն ալ՝ կ'ընծայեն հոգաբարեկութեան:

Աղա՛մ Վարդեան մեծապէս գոթ թողուցած է իր բաղմամբիւ յաճախորդները: Կ'արժէ որ Նուկայ, Ելլող ամէն ընտանիք այցելէ անոնց մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

Ելլող այս յայտը լայն ըն զեպի 6—10 դրամ

Ելլող այս յայտը զի առ միջոց միջոց Ելլող

Ելլող այս յայտը զի առ միջոց միջոց Ելլող

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 34

19 ՕԳՈՍՏՈՍ 1904



ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ
Օ Գ Ո Ս Տ Ա Փ Ա Ռ
ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ
ՄԵԾԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԹՈՒՐԻՈՅ

Յնձուլեան և բերկրութեան ընդհանուր արտայայտութիւններով և ամենալքեղ հանդիսաւորութեամբ կը տօնուի այսօր ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ Գահակալութեան բարեբաւորիկ Տարեդարձը, Օսմանեան ընդարձակածաւալ Կայսրութեան ամէն կողմը, Ն. Կ. Վեհափառութեան միլիոնաւոր հաւատարիմ հպատակներուն կողմէ: Մայրաքաղաքը ամբողջ՝ ոգեւորութեան ու տօնի մէջ է, ինչպէս նաև բոլոր նահանգները, դաւառային քաղաքները, մինչև իսկ հեռաւոր ու յետին գիւղերը նոյն ինքնաբոլիս զգացումներով կը մասնակցին Կայսերական Գահակալութեան Տարեդարձի տօնին: Ամենուրեք բարեմաղթութիւններ կը բարձրանան՝ իբրև թարգման երախտագէտ զգացմանց: Այս գեղեցիկ արտայայտութեանց կը փութան մասնակցիլ նաև Թուրքիոյ մէջ հաստատուած օտարազգիները, իրենք ալ իրենց չնորհապարտ մեծարանքի բաժինը նուիրելով ցնծագին:

Կայսերական Գահակալութեան բարեբաւորիկ Տարեդարձը փառաւոր առիթ մըն է որ ժողովրդեան ամէն դասակարգերը հանդիսաւորապէս արտայայտեն երախտագիտական այն պատկառոտ զգացումը զոր կը տածեն ՕԳՈՍՏԱՓԱՌ ՎԵՀԱՊԵՏԻՆ Նկատմամբ Որուն բարձր հովանիին ներքև կը վայելեն ամէն բարիք և չնորհներ:

Օսմանեան հոյակապ Կայսրութիւնը, Ն. Կ. Վեհափառութեան Դահլիշալուծեան ի վեր, յարաճուն զարգացման ու յառաջդիմութեան մէջ է, ու անընդհատ կ'աւելնան իր նաւային ու զինուորական ոյժերը, կը բարձրանայ երկրին ելմտական ու տնտեսական վարկը, կը բազմանան կրթական ու բարեգործական հաստատութիւնները և կընդարձակին երկրագործական ու ճարտարարուեստական ձեռնարկութիւնները զորս մի առ մի թուելու համար հատորներ պիտի լեցուէին: Այս ձեռնարկութեանց մէջ ամէնէն նշանաւորն է Հիւճաղի երկաթուղիին շինութիւնը որուն առաջին մասին (Դամասկոսէն Մասն) բացումը կը կատարուի այսօր հանդիսաւորապէս, Կ. Պոլսէն յատկապէս զրկուած Բարձր Պատուիրակութեան ներկայութեամբ: Նոյնպէս այսօր, ի պատիւ Կայսերական Դահլիշալուծեան բարեաստիկ Տարեգարձին, սկզբնաւորութիւնը կ'ըլլայ զանազան հանրագում շինութեանց ու բարեգործական հաստատութեանց, նոր փայլ մը աւելցնելով ընդհանուր ցնծութեանց:

Այս բոլոր երկրաշէն ձեռնարկութիւնները ուղղակի արդիւնք են Վեհ. ԿԱՅՍԵՐ հանճարեղ մտքին, իմաստուն կառավարութեանը և բարեխնամ հովանիին որոնցմով իրաւամբ կրնայ պարծիլ Թուրքիա յաչս օտարաց: Ինչպէս ամէն օգտաշատ գործ և հաստատութիւն, նոյնպէս և տեղական լրագրութիւնը ամէն ժամանակ վայելած է ու կը վայելէ Ն. Կ. Վեհ. ԿԱՓԱՍՏԱՆԻ շնորհները և այսօրուան բարեբաստիկ Տօնէն կ'օգտուի՝ արձագանգ հանդիսանալու համար հանրային երախտագիտական ու ցնծալից զգացմանց, մաղթելով արեւշատութիւն ու յարատեւ բարեբաստութիւն Օսմանեան մեծազօր և լուսամիտ Ինքնակալին, և ամէն կողմէ բարձրացող օրհներգութեանց և մաղթանաց ձայնակից՝ կը գոչէ սրտեռանդն:

ՅԱՐԵՑ ԿԵՅՅԵ

ՎԵՀ. ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍՐ

ՄԵՆՍԽԻՆ ԻՆՔՆԱԿԱԼՆ ԹՈՒՐԳԻՈՅ

Ազգ. Պատրիարքարանի կողմէ հրատարակուած Պաշտօնական Ծանուցման համաձայն, այս առաւօտ Մայր Եկեղեցւոյ մէջ գոհաբանական հանդիսաւոր մաղթանքներ կը կատարուին՝ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և մասնակցութեամբ եպիսկոպոսական դասուն, քարոզիչ վարդապետներու և աւագերէցներու: Արարողութեանց ներկայ կը գլուխուին Կրօն. և Բաղ. Ժողովոց անդամները, Տեսուչ Խորհուրդներու, Հոգաբարձութեանց, Խնամակալութեանց, Թաղ. Խորհրդոց ներկայացուցիչներ և ամէն դասակարգի ազգայիններ: Արարողութեանց աւարտումէն ետքը, Ս. Պատրիարք Հայրը Կայս. Պալատ կ'երթայ՝ յանուն Ազգին շնորհաւորական ու երախտագիտական Ուղերձ մը մատուցանելու:

* * Նոյնպէս Կայս. Պալատ կ'երթան ի շնորհաւորութիւն՝ միւս հպատակ հասարակութեանց հոգեւոր պետերը, Տէրութեան աւագանին, զինուորական, քաղաքային ու կրօնային բարձրաստիճան պաշտօնատարներ, դեսպանատանց Ա. Թարգմանները, սեղանաւորական և ուրիշ մեծ հաստատութեանց պետերը:

* * Այսօր առաւօտէն սկսեալ, տօնական շքեղ երեւոյթ մը առած է Օսմանեան ռոտանը և լուսավառութեանց համար շաքաթներէ ի վեր սկսուած մեծամեծ պատրաստութիւնք, թէ՛ ցամաքի և թէ՛ ծովու վրայ, աւարտած են ու զիչերուան առաջին ժամուն անթիւ անհամար լոյսերու մէջ պիտի ողողուին Վոսիփօր՝ իր երկու եղբրքներով և մայրաքաղաքին ամէն կողմերը:

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Մասիսի ՅԶրդ թիւին մէջ Կորին վարդապետ կարճ ուսումնասիրութիւն մը հրատարակած էր գաւառացի կնիկան վրայ՝ այն տաքուկ ու կարեկցող զգացումովը որ յատուկ է միշտ ամէն գաւառացի գրողի, երբ խնդրը յատկապէս կը վերաբերի իր քոյրերուն, իր մայրերուն առանին տխուր վիճակին:

Այդ ուսումնասիրութիւնը իր ամբողջութեանը մէջ կսկծալի իրականութիւն մը կ'ամփոփէ, ցոյց տալով գաւառացի կնոջ այն տարապայման աշխատողի պատկերը՝ որուն բոլոր յուզիչ տպաւորութիւնը հազիւ թէ կարելի ըլլայ աւելի կամ նուազ ուժգին բացատրութիւններով արտայայտել. մարդ գաւառը կամ եղբայրն ըլլալու է այդ կնոջ, ապրելով անոր հետ նոյն միջավայրին մէջ ծծած ըլլալու է անոր կաթը՝ իր երակներուն մէջ իսկ կրած ըլլալու համար անոր հագւոյն դառնութիւնէն, որպէս զի կարելի ըլլայ զինքը ճանչնալ ճշմարտապէս ու բոլոր սրտով:

Կորին վարդապետ՝ իբրեւ գաւառացի՝ ահա կրցեր է այսպէս քանի մը ամիտի տողերու տալ իրական անկեղծութիւն մը, որ կրկնապէս շահեկան կը դարձնէ իր գրութիւնը, տալով անոր կենդանութիւն և յուզում: Բայց, որովհետեւ ուսումնասիրութիւնն ինքը կոչուած են մեր կեանքին վաւերական յիշագիրներն հայթայթել ներկային ու ապագային համար: Ի՞նչ կողմէս աւելորդ չեմ նշկատեր քանի մը նկատողութիւններ ներկայացնել նոյն օգոյշութեան մէկ երկու կէտերուն նկատմամբ: Խօսելով գաւառացի կնոջ ճաշակին վրայ, Կորին վարդապետ կ'ըսէ. «Ճաշակի պակասութիւնը շատ զգալի է. դարերէ ի վեր ինչ որ տեսած են այն կ'ընեն ու կը պահեն, առանց անկէ քայլ մը իսկ հեռանալու և նշանախէց մը իսկ փոխելու. հին բարքերը ու սովորոյթները փոխելը սրբապղծութիւն կը համարուի գաւառացի կնոջ համար»: Այս դատաստանը եթէ ոչ

օխալ, գէթ շատ խիստ է, որովհետեւ գաւառացի կնիկան ճաշակը կայուն և ցամաք հանդուսնք մը չունի երբեք. ընդհակառակը, անիկա երբ ամէն անգամ պատեհութիւնը ներկայացած է՝ ընդօրինակեր է իր շրջանակին մէջ գտած ամէն նորութիւն և նորաձեւութիւն. այսօր ինծի ծանօթ մէկէ աւելի գաւառական քաղաքներու մեր կնիկներուն արդուզարդը, տարազը—մանաւանդ նորահաս աղջիկներու և հարսներու վրայ—շատ կը մօտենայ Պոլսոյ և Իզմիրի իր քոյրերուն զգեստեղէնին. բաւական է որ օրինակը տեսականօրէն իր աչքին առջև ըլլայ, բաւական է որ իր ընտանեկան պայմանները ձեռնտու ըլլան և գաւառացի կինը երբեք յետաձգեց մը չպիտի ըլլայ ճաշակի մէջ:

Ի հարկէ կնոջական վիճակի բարեշրջութիւնը հապճեպով և արագ տեղի չունենար, և զարգացած կեդրոններու դրացին դառնող քաղաքները աւելի շուտ, յետոյ հեռաւորները և ամէնէն ետքն ալ քաղաքներէն գեղերը պիտի անցնին խոտոր գծով ամէն զարգացում՝ ըլլայ ընկերային, ըլլայ բարացուցական: Հեռաւոր գաւառներէն շատերուն մէջ մեր կիներուն իբրեւ հայելի ծառայած են այս մասին օտար միսիոնարութիւնները, որոնց վրայէն ընդօրինակած են տարազի ու ճաշակի վերաբերեալ շատ նորութիւններ: Ինչպէս յայտնի է, ճաշակը նախ մտաւորական զարգացումով ու յետոյ ուղղակի ընդօրինակութեան օրէնքով կ'ազնուանայ ու կը բարեշրջուի. արդ, բոլոր այն գաւառներուն մէջ՝ ուր մեր մայրերը կրցած են այս պայմանները ունենալ՝ իրենց ճաշակը զգալի բարեփոխութեան մը ենթարկուած է, սակայն միշտ ընտրողական ոգիով:

Կորին վարդապետ նոյնքան խիստ է իր վճռին մէջ, երբ կը յայտարարէ թէ՝ «Գաւառացի կինը բառին բովանդակ և լայն նշանակութեամբը տգէտ է: Իր մտքին հորիզոնը ա՛յնքան է որքան իր ապրած միջավայրին հորիզոնը: Այբուբենի չնորհանքէն զրկուած է ի սպառ, գիրքն ու գրիչը տղամարդոց մենաշնորհը նկատուած են. ինչ պէտք է աղջիկներուն ուսում սորվեցնել և կամ

զանոնք դպրոցի մէջ կրթել ու դաստիարակել»։ Գուցէ գաւառական շատ խուլ անկիւններու համար ճշմարտութեամբ վերաբերին այս տողերը, սակայն գրուածքին ընդհանրացումը արդար և իրաւացի չէ։ Այսօր դաւառներու մէջ կինը կարող ենք երեք որոշ դասաւորութեանց բաժնել. անցնելու վրայ եղող սերունդը, ասոր անմիջապէս յաջորդելու կոչուածը և աղջիկ մասը։ Իրաւ է թէ անցնելու վրայ եղող սերունդը տգէտ է և կորիւն վարդապետի տուած սահմանումին ուղիղ ենթական, քանի որ որոշ թուականէ մը ասդին կըսկսին գաւառներու կրթասիրական ձեռնարկները։ Բայց այսօր գաւառական բոլոր գլխաւոր կեդրոններն ու նոյն իսկ ամէն երկրորդական թեմերու մէջ արական վարժարաններու յարակից կան ու կը շարունակեն աղջիկներու վարժարանները, հոգ չէ թէ ըլլան ասոնք նախակրթարաններ կամ պարզ ծաղկոցներ. որովհետեւ ինչ հարկ, այսօր նոյն ինքն մայրաքաղաքին և դարգացման անուն հանող առաջնադիր քաղաքներուն կը պակսի բացարձակապէս՝ աղջկանց բարձրագոյն վարժարան մը։ Բայց այս չէր խնդիրը. իրողութիւնը այն էր՝ միայն որ կորիւն վարդապետ՝ գաւառացի կնկան մը տաւոր վիճակին վրայ անողոք սահմանում մը և ընդհանրացում մը կ'ընէր։

Գաւառական աչքի ինկած քաղաքներուն, գիւղաքաղաքներուն և բոլոր այն տեղերուն մէջ՝ ուր տղայոց վարժարան մը կը պահեն, հոն հաւասարապէս գաւառացին պէտքը զգացեր է նաև աղջիկներու կրթութեան։ Անցած նախապաշարում մըն է այլևս կըրթութեան մասին ընդհանրապէս, և աղջիկներու դաստիարակութեան մասին մասնաւորապէս ցոյց տրուած արհամարհանքն ու հակառակութիւնը։ Եթէ յաճախ գաւառացին ստիպուած է եղեր իր մանչ զաւակն իսկ դպրոցէն կանուխ դուրս բերել՝ իր աշխատութեան գործակցելու համար, ասիկա ուսման դէմ ունեցած իր ատելութիւնը չի հաստատեր. պատճառը պէտք է փնտռել նիւթական կացութեան, հացին անմիջական անհրաժեշտութեան եւ այս կարգի ուրիշ նկատողութիւններու մէջ։

Կորիւն վարդապետ նմանապէս անտար-

բեր, անզգած ու կամապաշտ կը գտնէ էրիկ մարդուն ընտանեկան վերաբերութիւնը առհասարակ կնոջ հանդէպ։ Իր հեռանկարին մէջ ճշմարտութեան շատ համեմատութիւններ կը կրէ այս վճիռն ալ, բայց մօտաւոր հետաքննութիւն մը յանցանքին բոլոր պատասխանատուութիւնը էրկան կնակին վրայ չլիտի բարդէ։ «Եթէ այր մարդը չառ անգամ ուրախանալու առիթներ կ'ունենայ կամ կըստեղծէ, ընկերներով կը զուարճանայ, կը զբօսնու, կ'երգէ, կը խաղայ, ու մարմնապարար ժամեր կ'անցընէ, սակայն ընտանիքներ անոնց մասնակից ընել նաեւ իր կինը, իր ընկերը», պատճառն այն չէ միայն որ էրիկը անտարբեր, ցուրտ ու անզգայ է իր կնոջ մասին, այլ գլխաւորաբար անոր համար որ՝ միջավայրի պատշաճութիւնները, միջավայրի բարքերու պարտադիր դարձած հանգամանքները թոյլատու չեն դարձներ այլապէս վարուելու, և պէտք է խոստովանիլ թէ ժամանակի սովորութիւններն ու յարմարութիւնները փորձառական իմաստութենէ մը կ'առաջնորդուին յաճախ։ Անվիճելի է թէ կնոջ ընկերական գիրքին բարձրացումը մեծապէս կախում ունի իրեն կնկան ու հաւասարապէս էրիկ մարդուն մօտ որական բարեխղճութենէն, սակայն ասկէ զատ միշտ նկատողութեան պայմաններ կը մնան միջավայրն ու իր բարդութիւնները։

Ինչպէս ըսի, այս մէկ քանի նկատողութիւնները երբեք բան մը չեն խախտեր Կորիւն վարդապետի յօդուածէն ու անոր առթած անկեղծ տղատրութիւնէն։ Գաւառացի կնոջ ընտանեկոն յարկին տակ ունեցած գիրքը, չարաչար աշխատութիւնը, կեանքի շատ մը քաղցրագոյն պայմաններէն զրկուածի իր վիճակը՝ ցաւով, համակրութեամբ և գորովով պէտք է լեցնէ մեր սիրտը։ Անիկա իր լքումին ու ընտանիքին համար ունեցած անպայման անձնութեանը մէջ ուշադրի համակերպութեամբ մը կը ներկայանայ, եւ իր մայրական ու կնոջական մէկէ աւելի յատկութիւններով, չարքաշու թեամբն ու ընդունակութիւններով արժանի է զրաւելու աշխարհի բոլոր կիներուն մէջ պատուական տեղ մը, յարգանքի շարք մը։

Իզմիր

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ԳԱԼՖԱԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻՆ ՇՈՒՐՋԸ

(ՍՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՄԸ ՍՈՒԹԻՒՄ)

ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՅՕԴՈՒԱՄ

Անցնելէ առաջ Գալֆայեան Որբանոցի ներքին վիճակին, յարգանքի արժանաւոր բաժին մը նուիրել հարկ է ողբացեալ Տիկնոջ մը յիշատակին, որ անդրանիկ անդամուհին եղաւ Տիկնանց Խնամակալութեան ու կարելի է ըսել թէ նախաձեռնութիւնը ունեցաւ անոր կազմակերպութեան, չի մերժելով այս նպատակաւ Պատրիարքարանի կողմէ իրեն եղած դիմումը: Պէտք կ'այնուանելու այդ գործադուծութեան անձնուէր անդամուհին, Տիկին Աղաւնի Գաղազեանը, զոր վաղաժամ մահը խնց' ինչպէս իր ընտանեկան յարկէն, նոյնպէս իր հանրային բարեգործութեան այս շրջանակէն որուն արտովին փարած էր, միմիայն օգտակար ըլլալու համար Գալֆայեան սանուհիներուն որոնց լքուած վիճակին կը կարեկցէր անկեղծապէս: Այդ համակրելիօրէն պատկառոտ Տիկինը, որուն բովանդակ կեանքը անհատական ու առանձին բարեգործութիւններու նուիրուած էր, Որբանոցին խնամակալուհի եղաւ նոյն եռանդով զոր ի յայտ բերած էր ժամանակաւ՝ գործօն անդամակցութիւն մը վարելով Ազգ. Հիւանդանոցի Տիկնանց Խնամակալութեան մէջ: Յաջորդական սուգեր զինքը աւելի՛ զգայնոտ աւելի՛ կարեկից դարձուցած էին չքաւոր ու դժբաղդ մանկութեան մը հանդէպ որպէս են Գալֆայեան սանուհիները, և անոնց խնամարկութեան, հոգածութեան, անոնց վիճակին բարեօրոյման աշխատելուն մէջ հոգեկան սփոփանք մը կը փնտռէր, ինչպէս այսօր իր պատուական եղբայրը՝ Գաղազեան Վսեմ. Նշան էֆէնտին՝ որ իր մեծաւորիկ կեանքին մէջ միտքարանք կը գտնէ նպատակելով կրթական, բարեգործական ու բարեպաշտական պէտքերու, նոյնքան համեստ ձեւի մը տակ՝ որքան առատաձեռնօրէն:

Մինչև Որբանոցի նորոգումը շէնքին ա-

ւարտումը, Գալֆայեան Որբանոցի սանուհիները տեղաւորուած են մօտակայ հինաւուրց և ընդարձակ շէնքին մէջ ուր, հակառակ առժամեայ հանգամանքին, ամէն կարգ ու սարք պահպանուած է, առաջին պայմանն ըլլալով մաքրութիւնը: Հոն է Քրիստինէ մայրապետ, Որբանոցին մայրը, որ իր անձայն անչլուկ երեւոյթին, ստուերի պէս սահող անցնող գնացքին տակ կը ծածկէ՝ կամքի տէր, ժիր, աշխատասէր կնոջ տիպար մը, — խօսուածքով մը որ համեղ է՝ բայց խիստ, և ժպտուն նայուածքով մը որ հրամայական է: Քրիստինէ մայրապետ իրեն օգնական ունի երկու քոյրեր, — քոյր բառին կրկնակ իմաստովը, — Օր. Աղաւնի Բէօսէեան և Օր. Մարիամ Բէօսէեան որոնց առաջինը ձեռագործի դաս կուտայ ու երկրորդը՝ գրաւոր աշխատութիւնները կը կատարէ, երկուքը մէկանց ընդհանուր հսկողութիւնը ստանձնած սանուհիներուն որոնք զիրենք կը յարգեն ու կը սիրեն:

Արդէն, սանուհիներուն վարք ու բարքը, հազուստ — կապուստը, շարժումները, ամէն բան ցոյց կուտան թէ խնամոտ հոգածութեան մը առարկայ են և մեծապէս հոգ կը տարուի իրենց կրթութեան ու մաքրութեան: Այդ պզտիկները կը մեծնան ո՛չ քծնող ու խոնարհ ձեւերով, իբրեւ ընտանեկուրկ ու չքաւոր աղջիկներ, և ո՛չ ալ ամբարտաւանութեան մօտեցող անկաշկանդութեամբ մը. — բարեկիրթ, պարկեշտ, սիրուն աղջիկներ են ամէնքն ալ: Եւ այս պարագան նոյնքան պատիւ կը բերէ Խնամակալութեան որքան ներքին պաշտօնէութեան որուն մէջ աչքառու դիրք մը կը գրաւէ մեր վաղածանօթ Ռէթէոս Էֆ. Թադէոսեանը, իբրեւ դաստիարակ ու ներքին հսկող կամ տեսուչ Որբանոցին: Կը ճանչնաք այս հին ուսուցչի տիպարը որ նոր մըն է միանգամայն, իր գործնական գաղափարներովը, ժամանակին ոգւոյն ու ճաշակներուն իր հետեւողութեամբը զորս թէև չիւրացնէ իր անձին վրայ, բայց գիտէ պատուաստել իր խնամքին յանձնուած պզտիկներուն: Իր ներկայութիւնը, Որբանոցին մէջ, հօր մը բարոյական ազդե-

ցութիւնը կը ներգործէ՝ ինչպէս Քրիստոնէ Մայրապետինը՝ մօր մը և Բոյր Աղաւնիի ու Մարիամի ներկայութիւնը՝ քրոջ մը ազդեցութիւնը։ Այս ներդաշնակ ու նպատակաշարմար տարրերուն շնորհիւ է որ, երկու տարիէ ի վեր, Գալֆայեան Որբանոցը թօթափած է իր երբեմնի ներքին տխուր ու արգահատելի վիճակը և օրըստօրէական բարւոքման մը ճամբուն մէջ է որուն տարակոյս չիկայ թէ նոր զարկ մը պիտի տրուի, երբ Որբանոցը փախադրուի նոր շէնքին մէջ, իբր երկու ամիսէն։

Տ. Ա. :

Շարժում մէջ հրատարակուեցաւ Խնամակալութեան մէկ նամակը որ կը ծանուցանէր Գալֆայեան Որբանոցին վերաշինութեան ի նպատակ բարեկէր աղագայիններու կողմէ եղած նուիրատուութիւնները։ Յուշակին գլուխը կը գտնուի Ս. Պատրիարք Հօր անունը՝ 10 ոսկիի նուիրատուութեամբ և ամբողջին գումարը կը հասնի 212.75 ոսկիի, որ բարդուելով՝ նախապէս եղած 533 ոսկիի նուիրատուութեանց վրայ, կը կազմէ 745 օսմ. ոսկի 75 դրշ. ոսկեդրամի համադումար մը, ինչ որ դրական հաւաստիք մըն է այն տաք վերաբերումին դոր հանրութիւնը կը պածէ Գալֆայեան Որբանոցի վերաշինութեան նըկատմամբ և այն լիակատար վստահութեան դոր ունի այդ մարդասիրական գործին վարիչներուն վրայ, — Խնամակալութիւն և Վերաշինութեան Յանձնաժողով որոնց անդամուհիներուն ու անդամներուն պատուաւոր անունները ինքնին գրաւական մըն են արդէն։

Ս. Աստուածածնայ տօնը աւանդական հանգիսաւորութեամբ տօնուեցաւ կիրակի օրը մայրաքաղաքիս բոլոր եկեղեցիներուն մէջ ուր քարոզիչ եպիսկոպոսները կամ վարդապետները պատարագ մատուցին և կատարեցին խաղողօրհնէքի արարողութիւնը։ Մայր եկեղեցւոյ մէջ հանգիսաւորապէս պատարագեց Ս. Պատրիարք Հայրը և օրուան տօնին վրայ հոգեւունչ քարոզ մը խօսեցաւ։

Ն. Սրբաղնութիւնը երեքշաբթի օրն ալ յատկապէս կ'անանց համար պատարագեց, և իր քարոզին մէջ յորդորեց կիները՝ հետեւիլ Տիրամօր օրինակին տիպար մայրեր ըլլալու համար, իրենց կարողութեան չափով օգնել այր մարդուն, բաժնելով անոր աշխատութիւնները, մեղմացնելով անոր վիշտերը և բարեգործութիւններ կատարելով։

Պատրիարքարանի յարաբերական դիւանի տեսուչ կարապետ էֆ. Խաչատուրեան երկուշաբթի առաւօտ մայրաքաղաքս հասաւ Երուսաղեմէն եւ ուղղակի Բերա՝ Ս. Պատրիարք Հօր բնակարանը երթալով, տեսակցեցաւ Ն. Սրբաղնութեան հետ։ Երուսաղեմի Պատր. փոխանորդ Տ. Դէորդ եպիսկ. Երէցեան երեքշաբթի օրը պատրիարքարան երթալով այցելեց Ս. Պատրիարք Հօր և տեսակցեցաւ նաեւ Խաչատուրեան էֆ. ի հետ։

Բիւզանդիոն կ'իմանայ այս առթիւ թէ Երէցեան Սրբաղան յանձն կ'առնէ՝ Տ. Ղեւոնդ վարդապետին կողմէ փոխանորդաբար ներկայացնել հաշիւներն եւ ամէն բացատրութիւն տալ, միանգամ ընդմիշտ կարգադրելու համար հաշուական խնդիրը։

Ամասիոյ եւ Մարդուանի առաջնորդ Տ. Սրիստակէս եպիսկ. Վանքեան, մայրաքաղաքս գալէն ի վեր առաջին անգամ ըլլալով պատարագեց Ս. Աստուածածնայ կիրակին Պէյքօղի Ս. Նիկողայոս եկեղեցին որ այս առթիւ բացառիկ հանգիսաւորութիւն մը զգեցած էր. չըջակայ արուարձաններէն երկսեռ բաղմութիւն մը գրաւած էր այդ գիւղական եկեղեցին որ նեղ կուգար։ Ներկայ էր նաեւ Տ. Բարթողիմէոս Սրբաղան որ սրտազեղ յուզումով կը տեսնէր իր հօգեւոր սանին եպիսկոպոսական պատարագը։ Եկեղեցական արարողութիւններէն ետք, Ն. Սրբաղնութեան բնակարանին մէջ սեղան մը տրուեցաւ որուն հրաւիրուած էր նաեւ Պէյքօղի գայմադամը։

ԴՐՈՒԱԳՆԵՐ՝Ը

Անոնք որ գիտակ են թէ, ի՞նչ տեսակ գործ մըն է գրական աշխատութիւններով պարապիլ և տարուէ տարի յաջորդաբար հրատարակութիւն մը լոյս տեսցնել, եկեղեցականի մը հաւար, որ չուզեր ձեռքերը ծալած նստիլ և որ գրական գործունէութեան մը նուիրուած, գրական, կրթական և եկեղեցական շրջանակին մէջ, զայն կը հետապնէ՝ տենդոտ փութաշանութիւնով մը, կըրնան գաղափարը ունենալ արժէքին և գինին վրայ հրատարակութեան մը, և սահմանել անոր նշանակութիւնը:

Նուանդուն Արմաշականին՝ Մուշեղ վարդապետի, իր առաջնորդական և եկեղեցական բոլոր զրադումներէն՝ ինչպէս նաև տեղական թերթերէն մեծադոյն մասին նուիրած բեղմնաւոր աշխատակցութենէն դուրս, մէկ քանի տարուան մէջ իրարու ետեւէ իրարմէ արժէքաւոր գործեր հասցնելը և Հայ Մատենադրութիւնը օժտելը իր Հովուական Թուղթով, Պատկերներով և հիմա՝ Դրուագներով, կըստանայ նշանակութիւն մը՝ որուն ծնցուցած արժանիքի զափնին չքեղ պատիւի մը ծագիկներովը կը լուսապսակէ իր ճակատը:

Իր այս գործունէութեան արժէքը չա՛տաւելի կը մեծնայ անոնց աչքին՝ որոնք մօտէն գիտեն բազմաշխատ կացութիւնը բանիբուն Արմաշականին, որ արդէն գլուխ ելած գրական գործի մը փառքովը չքաւականացող իր ոգիովը՝ հիմա ալ նուիրուած է Բողոքականութեան Մագումի պատմութիւնը Հայեւու մէջ երկասիրութիւնը կազմելու ծանրաշխատ գործին:

Իրեն ընծայելէ ետքը պատիւի այն անհրաժեշտ հարկը, զոր իր իրապէս արժէքաւոր գործերովը կ'արդարացնէ Հովուական Թուղթին հեղինակը, պէտք է անդրադառնալ իր նոր գործին՝ Դրուագներուն, որ գրական բացառիկ հանգամանքով մը կը ներկայանայ:

Դրուագները նոր սեռ մըն է գրականութեան մէջ, զոր առաջին անգամ կը փորձէ

հեղինակը, Աստուածաշունչի ոգին ուրիշ կերպով մը սիրելի ընելու առաջադրութիւնով անոնց՝ որոնք ցուրտ ուժացումի մը մէջ կը գտնուին անոր հանդէպ, անգիտակից տրամաբանութենէ մը մղուած:

Դրուագներուն նպատակն է, հեղինակին իսկ բացատրութիւնովը.— Ա.—Ընթերցողներուն տալ զուտ Աստուածաշունչական ոգիով ու նիւթով գրուած գիրք մը: Բ.—Իր ընթերցողները տանիլ՝ իր պարունակած նիւթերովը ու բնագրական ցուցումներով (indication), բուն իսկ Ս. Գրոց ընթերցումին, որ մեր ժողովուրդին համար ամէնէն անտեսուածը եղած է:

Այս քանի մը տողերը դիւրաւ կրնան բացատրել ուրեմն դիտումը գործին, ինչպէս նաև այն ոգին՝ որ կը տիրէ անոր մէկ ծայրէն միւսը:

Հակառակ աստուածաշունչական առնչութիւն մը ունենալուն, և հակառակ Դրուագներուն գործը ու ոգին միշտ Ս. Գիրքին հետ ըլլալուն, քարոզադիրք մը, կամ կրօնական մշտնջենապէս ծամծմուած նիւթերու ամփոփոյք մը չէ՛ ան:

Դրուագները արձակ բանաստեղծութիւն մըն է ծայրէ ծայր, որուն նիւթը կը կապմեն Հին և Նոր Կտակարաններու մէջ պատմուած այն բոլոր դէպքերը և պատահարները, որոնք վիպական և դիւցազնական յատկութեան մը յորինուածքը և անբաղդատելի գեղեցկութիւնը ունին: Այդ անցքերը կը վերաբերին հնութեան մը և անցեալի մը՝ ուր տիրող ընկերային, մարդկային և քաղաքակրթական հանգամանքները բոլորովին տարբեր գոյն մը ունին, և այդ իսկ պատճառով հոն անցնող կեանքը, ինչպէս մարդկային նկարագիրներու և բոլոր իրերու դրութիւնը՝ նորութեան մը յատկանիշը ունին արդէ գարեբուն մէջ:

Այդ կեանքը՝ հնութեամբ նոր այն կեանքն է, որ իր մէջ կը բովանդակէ ինչ բան որ մարդկային ոգին ունի անկեղծ: Միամիտ ու սրբազնացած, Հոն, մարդուն հոգին իր անկեղծ նախնականութեանը մէջ, չէ՛ խաթարուած այն այլասերիչ և վատթարացնող պատուաստումներով՝ որոնք ետքի ժամանակ-

ներու պիտակը եղած են, և որոնց ենթարկուած է ան հետզհետէ, վրայ տալով իր ամէնէն ազնիւ յատկութիւնները: Հոն ամէն բան մաքուր, ամբիւծ է ու սրբացած, և չունի մոլական այն յատկանիւը, զոր զգեցած են հետզհետէ բարքերը ու մարդկային նկարագիրները ետքէն: Այդ կեանքը ազնուացուցիչ և ներշնչող անբծութիւն մը ունի, որ կ'ոգեւորէ սիրաբար ու կը բարձրացնէ հոգին, իր սրբազան բարձրութիւններուն մէջ: Անիկա ներշնչարանը եղած է ամէն անոնց՝ որոնք թելադրանքը ունեցած են գերազանցապէս մարդկային գործեր դարձնելու, հընութեան այդ անխաթար թանգարանին մէջ փնտռելով մաքուր ատաղձը իրենց տիպարներուն և նկարագիրի օրինակներուն, յանձին այն դէմքերուն՝ որոնք յաւիտեականօրէն անմահացած են իրենց ասպետական և ազնիւ դերերուն մէջ: Անիկա՝ միանգամայն զանձաւորանք եղած է նաև ամէնէն վեհամասն և բարձրասիրտութեամբ պատահարներու և անցքերու, որոնք նշանակելի ու գերազանց երևույթները կը կազմեն մարդկային հոգիին կրած զխմայելումներուն և անոր հանդիսադրած արարքներուն:

Ամէն անոնց գործը, որ կենդանացումը և պատկերազրութիւնը եղած է այդ կեանքին, և ուղղակի բոլորած անոր թաքուցած տեսարաններէն, միշտ հետաքրքրական եղած է մարդկային միտքին համար, միշտ թարմ, միշտ նոր ու աւինքնող: Այդ գործերը, ինչպէս են օտար հեղինակներէ շատերունը, որոնք ոստուածաշնչական տիպարներու և անցքերու վրայ դարձնած են իրենց գործերը, մեծ յաջողութիւններ եղած են միշտ, և համակրութեանը արժանացած ընդհանուրին՝ իբր սրտի խօսող ու մաքուր կեանքի մը շունչովը բաբախուն յիշատակարաններ:

Դրուագներու հեղինակն ալ, իր երկը բարձրացուցած է այն հիմերուն վրայ, զորս Ս. Գիրքի խտացուցած դէպքերը, անցքերը և մարդկային նկարագիրները կը հայթայթեն իբր ատաղձ:

Դրուագները, մէկ խօսքով, կենդանացումն են Աստուածաշունչի մէջ բովանդակ-

ուած ամէնէն ուշադրաւ ու կարկառուն «դրուագներ»-ուն:

Գաղափար մը կազմելու համար այն լեզուն վրայ, որով յօրինած է հեղինակը իր գիրքը. պէտք է կարգաւ զայն, ճշակելու ձգտումով մը, կամ գաղափարը ունենալ բանաստեղծական այն ձիւղին ու ճշմարիտ տաղանդին, որով օժտուած է Մուշեղ վարդապետ:

Իր այս նոր երկը, անգուգական էջ մըն է զմայլելի բանաստեղծութեան մը, գիրքին մէկ ծայրէն մինչև միւսը, տիրական, յանկուցիչ, ինքնաբոլս, որ չտկարանար երբեք, չի՛ սայթաքիր, այլ մի'եւեռօրն ուժգնութիւնով, մի'եւեռօրն խանդավառութիւնով կը ժայթքէ կուրծքէն բանաստեղծին, ստանալով գունագեղութիւններ, պճնուելով ճկուն լեզունի մը բոլոր խանդաբորբ աւինովը, որ կենդանի ու խօսուն շնչաբար կ'առկայծէ կեանքով ու արեւով լեցուն իր նիւթերուն:

Ծանօթ ըլլալով Մուշեղ վարդապետի կորովի գրիչը ու ինքնատիպ ատաղանդը, դիւրաւ կարելի է եզրակացնել թէ, ինչ յաջողութիւնով մը դարձնած է ան իր գործը, կենդանացնելով հին սրբազան պատմութեան անցքերը վառվռուն խանդով մը և աւինով գրուած էջերու մէջ, միացած նըկարագրութեան և պատկերացումի անբաղդատելի կերպով կենդանի տողերու, ուր վրձինը և բանաստեղծական շունչը զմայլելի կատարելութեան մը կը հասնին:

Անկարելի է բացառիկ ընտրութիւն մը, մէջ-բերում մը ընել այդ ատտիկեան գեղեցկութեամբ տողերէն, որովհետև ադ է որ կը տիրէ ամէն կողմ, անո՛վ է որ կենդանացած են գիրքին բոլոր էջերը:

Կարելի չպիտի ըլլար նոյնպէս խօսիլ նիւթերէն իւրաքանչիւրին վրայ, քանի որ անոնք անջատօրէն երկար պատմութիւններ են, և մէկ երկու բառով չեն կրնար խտացուիլ:

Միայն կրնայ իբր անջատ մաս նկատուիլ գիրքին վերջաբանը, իրական կեանքը հատուածը որ կերպով մը եզրակացութիւնը ու խտացումն է Դրուագներուն

ունեցած ձգտումին, և որ իր նպատակին վրայ բաւական բան կը խօսի. —

«Մեր Դրուագները անտուածաշնչական բանաստեղծութիւններու փունջ մը ձեւացնելով հանդերձ, իր հետ կը բերէ նաև գիտակցութեան մը վերաքննութեան վաւերանիշը, ճիշդ այն կերպով, որ՝ Բարօի (E. Caro) վարդապետութեամբ, անհրաժեշտ է մարդուս իր բարոյական և կրօնական կեանքին անվթար պահպանումին համար»:

Այդ «բարոյական և կրօնական կեանքին անվթար պահպանումին համար» հեղինակը պաշտպան կը կոչէ.

«Յաւիտենական ոգին, որ իր բարձրութենէն դիտէ պիտի հովին դէմ մաղուած կեանքերը, որոնք դէպի իրենց երկնային հայրենիքը ճամբորդած ատեն ալեկոծութեան բռնուեր էին: Ու հակառակ ալեկոծութիւններուն, պիտի ճամբորդենք, ստիպուած ենք ճամբորդելու շարունակ, որովհետեւ «մեր քաղաքացիութիւնը երկինքն է», երկինքն է մեր հայրենիքը (Փիլիպ. Գ. 20)»:

Ու հասնելու համար այդ հանգրուանին, ան կ'ապաստանի «Յաւիտենական ոգիին» տակ. —

«Միայն դուն, ո՛վ Յիսուս, միայն դուն կրնաս մխիթարել վիրաւորուած հոգիները, դուն որ տիեզերական կեանքերու անհաւասարութեան մէջ հաւասարն ես: ... Միայն քու տառապանքդ է նուիրականը, որ կեանք կուտայ մարդուն, և քու սէրդ է միայն, քու ինքնամոռաց ու փրկաբաշխ սէրդ, վարդի անկողիններէ աւելի հոտաւէտ սէրդ, որ բոլոր գիրքերու բանաստեղծութենէն աւելի կենդանի բանաստեղծութիւն մըն է քու սէրդ միայն պիտի պահպանէ իրական կեանքը»:

* *

Դրուագներու մասին այս խանդավառ ու հմայուած տարբողանքն ետքը, գիտեմ որ լուրջ ու դժուարահաճ ձեւանալ ուղղող ընթերցողներ, պիտի ուղեն — ու պիտի սպասեն — լսել, գործին վրայ թերութիւններ ալ:

Միակ թերութիւնով մը կը պարծի Դրուագները: Ի՞նչ մը մութ է ան, և չի ներկայանար ամէն միտքի մատչելի ըլլալու առաքինութիւնով: Ասոր կը միանայ նաև տող ընդ մէջ, ամէն քայլի, անհարթ խորտ ու բորտութեան մը պէս դէմդ ելլող «քնադրական ցուցումներ»ը. — Դուկ. Բ. 1—3, Մտթ. Ա. 26—38, և շարունակաբար:

Ասոնք սակայն ո՛չ մէկ իրաւունքով կըրնան թերութեան մը կարգը անցնիլ, քանի որ անխուսափելի պէտքեր են, և գործին անտեղիտալի պահանջումը իսկ, առանց որոնց կարելի չպիտի ըլլար ապահովել գործին յաջողութեամբ գլուխ հանուիլը:

Իր գրական յատնի արժանիքներէն դուրս Դրուագները լռելեայն կը զգացնէ նաև բան մը, որ իր խօսուած նշանակութիւնը և մասնաւոր կարեւորութիւնը ունի ի նպաստ այն առաքելութեան, որով անոր հեղինակը սկիզբէն ի վեր քննադատուած է վկայուած պարզամիտներու կողմէ:

Դրուագները կը խտացնէ «բաց գրականութեան» սեռէն էջեր, որոնք լուռ պատասխան մըն են այն բոլոր նշանաւոր կեղծպարիշտներուն, որոնք ատենը մէյմը կը բուսնին ասդին անդին, ըսելու համար թէ Մուշեղ վարդապետ բաց կը խօսի իր գերուածքներուն մէջ, և կղերականի վայելքօղը չքաշեր իր բերնին՝ երբ պատմուածք մը կամ նորավէպ մը կ'ուզէ հրատարակել:

Ասիկա լուռ պատասխան մըն է ստանկներուն, որովհետեւ, բոլոր այն վրան բաց բացատրութիւնները և դարձուածքները որոնցմով լեցուն է գիրքը, տունուած են նոյն ինքն... Աստուածաշունչէն:

Ահա՛ վէճին արմատը և խնդիրն հոգին, ուրկէ՛ պէտք է որ մեկնիլ գիտնան ամէն անոնք՝ որոնք յուսահատեցուցիչ կեղծպարիշտութեան մը անդուգական օրինակներ կը հանդեսացնեն ինքզինքնին:

Երբ իր ամէն մեծութիւնովը ու սրբութիւնովը վաւերացուած Ս. Գիրքին մէջի աղատ խօսակցութիւնները չա՛տ աղէկ ծանօթ են անոնց, անոնք Մուշեղ վարդապետի վրայ կը կեղբոնացնեն իրենց ամբաստանու-

թեան բոլոր ուժը, երբ ան աշունցմէ շա՛տ համեստ ու շատ քողածածուկ բան մը դրէ։ Իրուագներու յատկութիւններուն այս մասը ա՛լ կարկեցուցիչ այն վերջաբանն է, որուն առջև ինքզինքը գիտցող ու է մարդ կ'արժէ որ ամօթահար լռել գիտնայ։

Իսկ եթէ երբեք գտնուին դեռ անանկներ, որոնք փորձութիւնը ունենան, ասկէ ետքը, լեզունին շարժելու, քիթի տակէ բան մը ըսելու համար, պէտք է պատուաւորութիւնը ունենան նախ... Աստուածաշունչին օձիքը բռնելու։

ԵՆՈՎ.Ք ԱՐՄԷՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՉԱԿ

25^{րդ} արեւելացի

Վարժարանը, իր 25ամեակին առիթով վերակազմուած նոր և լաւադոյն կարգադրութիւններով, կը բացուի Դ. օր, Սեպտ. 7ին (Ն.Տ.)։ Առեւտրական ուսումներ մեծ տեղ մը կը բռնեն բարեփոխեալ Ծրագրերին մէջ։ Վարժարանին ուսմանը ընթացքը վեցամեայ է, 2 տարի նախապատրաստական, և 4 տարի ալ Վարժարանական կարգերու համար։ Ուսուցչական Մարմինը կը բաղկանայ հմուտ և փորձառու ուսուցիչներէ, որոնց 5ը գոլէճներու ընթացաւարտներ են, և 1ը համալսարանական մը։ Առողջական տեսակէտով՝ Վարժարանին դիրքը անշուշտական է։ Իր յատուկ բժիշկը մօտէն կը հսկէ աշակերտներուն առողջական վիճակին վրայ։ Տնօրէնը և ուրիշ 4 գիշերօթիկ ուսուցիչներ, որոնք վարժարանին չէնքին մէջ կը բնակին, մօտէն կը հսկեն աշակերտներուն վարք ու բարքին վրայ։ Վարժարանին տարեթոշակն է 16 օսմ. ոսկի, որուն կէսը Սեպտ. 1ի սկիզբը վճարելի է, և միւս կէսը՝ Յունվ. 1ի վերջերը։

ԾԱՆՈԹ.—Կ. Պոլսէ եկող հին և նոր աշակերտները կրնան կէս գինով Հայտար—Փաշայի երկաթուղիով Իդմիտ գալ, դիմելով մինչև Օգոստ. 18/3, Պայպըլ—Հաուս, Դրիւ գոր էֆ. Շահպաղեանի։ Վարժարանին նոր յայտագիրը ստանալու համար դիմել Մր. Ռ.Ռ. Բիթի։ Պայպըլ—Հաուս, Կ. Պոլիս։

5—10

ԱՂԶԿԱՆ ՄԸ ՕՐԱԳԻՐԵՆ ՔԱՂՈՒԱԾ

Շաբաթ

Ձգացող աղջիկ մը ըլլալէ աւելի, սիրելի՛ Զարուհիս, պիտի ուզէի խորհող ըլլալ, բայց ամէնէն աւելի բռնուն ու յաւիտենական ըղձանքս պիտի ըլլայ ծնած չըլլալ։ Եւ այդ ըղձանքիս ուժգնութեան վրայ գաղափար մը կրնաս կազմել երբ ըսեմ որ աւելի պիտի ուզէի ծնած չըլլալ՝ քան երջանիկ։

Վասնզի այնպէս կը հաւատամ որ բնաւ իմ ուղած եղանակովս երջանիկ չպիտի կըրնամ ըլլալ, սա ընդվզող, ու միեւնոյն՝ ատեն դիւրայոյզ բնաւորութեամբս, սա դժուարահաճ ու սէգ նկարագիրովս։ Գիտեմ որ կը մեղքնաս ինծի, բայց ի՞նչ օգուտ։ Ո՛չ մէկ երեւոյթով, ո՛չ մէկ խուսափուկ միջոցով կրնամ խաբել ինքզինքս։ Ընդհակառակը կարծես աւելի՛ կը շեշտուն ցաւերս։ Որովհետեւ որքան երազներս ու ակնկալութիւններս անիրականալի, անկարելի թուին, ես այնքան հրայրքով, սաստկութեամբ կը փարիմ անոնց, այդ գերագոյն գինովութեան մէջ պզտիկ, ջնջին գոհացում մը փնտռելով։ Ու ո՛չ միայն գոհացում, այլ յոյսին նշոյլն անգամ չեմ ընդհարեր։ Սպասել՝ տառապիլ ըսել չէ՞ արդէն սիրոյ մէջ։

Կիրակի

Աւտուանց եկեղեցի դացի ու քեզի և ինծի համար աղօթեցի։ Երկուքիս համար միեւնոյն աղօթքը չէ՛ որ ըրի, սիրելի՛ բարեկամուհիս։ Ինչպէս վստահ եմ, դուն ուրիշ բանի պէտք ունիս, ես՝ ուրիշ բանի։ Տարբերութիւնը պիտի ճշդուէր այն պարագային, երբ դուն ինծի պէս քիչ մը զգալ սորված ըլլայիր, և ես քեզի չափ խորհիլ։ Այն ատեն երկուքիս մէկ՝ երջանկութիւնը պիտի փնտռէինք հոն՝ ուր կեանքը կը վերջանայ և ուր մարդ կը դադրի զգալէ, այսինքն տառապելէ։ — Բեզի այսօրուան կեանքս ներկարգրեմ, եթէ կ'ուզես։ Եկեղեցիէն վերադարձիս քիչ մը գոհունակ երեւոյթ ունէի կարծես, մխիթարուած էի գերաւանցօրէն

սուրբ ու նուիրական մթնոլորտի մը մէջ : Իրիկուան պտրտելու ելայ եղբօրս հետ, գիւղերը կանուխ տուն վերադառնալու պայմանով : Գիւղերը ընթերցումով զբաղեցայ, և քանի մը տող ոտանաւոր գրեցի, ան ալ Աստուած ոտանաւոր ընէ : Երբ տրամադրութիւն չունենամ, ընելիքս ալ չեմ գիտնար : Յետոյ... յետոյ, քնացայ... Ինչ տափով է սա կեանքը, Տէ՛ր Աստուած...

Երկուսքքի

Ծաղիկները չա՛տ կը սիրեմ, անոնք սրբախ կը խօսին ճիշդ ա՛յն լեզուով, որուն պէտք կ'ունենամ ամէն վայրկեան : Հարսնիքի մը մէջ, հարսին խորհրդաւոր, սիրուն իրանը ծաղիկներով կը պննջարդեն : Դա՛գաղի մը մէջ՝ մեռնողի մը հիւծած, դալկացած մարմինը դա՛րձեալ ծաղիկներով է որ կը սգազարդեն, ամէնէն աղուոր ու չքեղ փունջերով՝ որոնք դոյութիւն ունենան երբեք : Առաջին սէրը՝ վիպական ըլլալու համար, մարդիկ միշտ ծաղիկ սիրուն ու գեղաչէն փունջով մը կը խորհրդապատկերեն : Կը տեսնես որ ամէն խորհրդաւոր պարագաներու ծաղիկ կը դորձած են միշտ, ու ամէ՛ն ատեն : Անիկա, ինչպէս ըսի, մեզի հետ միտի թարական, արքշոյ, կախարդող լեզուով մը կը խօսի :

Կը մտածեմ թէ մեր երկուքին այնքան սիրած ծաղիկ բառին սկիզբը ինչո՛ւ բերեր բարձր ածականը աւելցուցեր են, դէ՛յ ու արատաւոր իմաստ մը տալով անոր : «Բարի—ծաղիկ» կ'ըսեն ա՛յն մարդոց՝ որոնք ամէնէն աւելի պէտք ունին սրբանալու, մաքրուելու :

Ուրկէ՞ կուգայ արդեօք այս հակասական ու տխուր նշանակութիւնը այդ երկու բառերուն միացման, որոնք թերեւս անջատօրէն առնուելով՝ պաշտօնելիք անձերու ու տունիւրու անունը ըլլալին : Եթէ՛ սակայն սա չրջանիս ստեղծուած ըլլար այդ երկու ներհակ բայց սիրելի բառերէն չինուած բացատրութիւնը, գոնէ գրականութեան մէջ, մեր գրականութեան մէջ ըսել կ'ուզեմ, պիտի արդարացնէր իր կեանքը, և ասիկա՝ այնքան տրամաբանօրէն՝ որքան՝ պիտի չկրնայիր երեւալայել :

Ընդհանրապէս այն զրոյները՝ որոնք իբր թէ մեր մէջ բոլորովին չմշակուած գրական (?) սեռ մը կը մշակեն, անոնք բոլորն ալ, ուշադրութիւն ըրած ես, ծաղիկի անուններ ընտրած են իբրեւ ծածկանուն : Անոնցմէ չատերուն դորձածած անուններուն նշանակութիւնը պիտի զուգորդուէր իրենց բո՛ւն անձին հետ ա՛յն պարագային երբ արդէն այդ ընտրուած ծաղիկ — ծածկանունները պէտք չունենային զօրաւոր ազդեցութիւնէ մը... Թօշնելու, որովհետեւ իրենք իրենց ծաղկելու ու միեւնոյն ատեն դոյութիւն առնուելութիւնը ունին անոնք, բան մը որ զիս չզարմացնէր, բարի—ծաղիկին իմաստը, նշանակութիւնը հասկնալէս ետքը : Աւելցնեմ սակայն որ, թէ և կեանքիս մէջ օր մը չեմ փորձած ծաղիկներուն քրիզանթէմը սիրել, բայց միշտ տարօրինակ փափաքով մը կը կարդամ գրողներուն Բրիզանթէմը, որ, չատերու ըսածին նայելով, ծաղիկ—քրիզանթէմին հակառակն է՝ եղբր, փոխանակ առտուան դի բացուելու, իրիկուան դէմ, մուծին մէջ կը բացուի, ու փոխանակ արեւուն դառնալու, չափազանց կը խորլի անկէ...

Երեքսքքի

Քանի մը չաբաթներ առաջ Paul Marietonի Une histoire d'Amour որ Ժօրժ Սանի և Միւսէի միջև փոխանակուած անտիպ նամակներուն և անոնց յիշատակներուն ամփոփումն է, Ֆրանսայի ընկերուհիի մը փոխտուած էի : Երէկ ետ դարձուցած էր սա նամակին հետ, զոր քեզի չկարդացնելու դաղտոնապահութիւնը չեմ ուզեր ընել :

«Իրաւ է որ սիրոյ բանաստեղծները վաղուան մարդիկն են միշտ, այսինքն անանկ կը հաւատամ որ, եթէ կայ գրող մը որ կարենայ կարգացուիլ ասկից հինգ դար վերջը, ան ալ բանաստեղծն է : Ամէն սեռ, ամէն գրական նորութիւն կրնայ հիննալ ու դորձածութենէ դադրիլ, բայց մարդիկ միշտ պիտի սիրեն, ու հակառակ նոր միջոցներ փնտռելուն՝ իրենց սէրը արտայայտելու համար, պիտի խարխափին և հին, աւանդուած միջոցներուն պիտի դիմեն, կատարելապէս հասկցնել տալու համար ինքզինքնին, վասն

զի ո՛չ սէրը կը ծերանայ և ո՛չ ալ զանկա արտայայտող միջոցները: Սիրողնե՛րն են միայն որոնք կը ծերանան, կը հիննան:

«Սակայն հակառակ ասոնց, չես գիտեր ի՛նչքան գանեցայ Միւսէի սիրային նամակները կարդալով: Ահելի բան է, սոսկալի բան է ասիկա, և իբրև անհատական մարդ, աչքիս առջև չափազանց կորսնցուց այն նշանակութիւնը զոր կրնայ ունենալ ուրիշ ո՛ր և է բանաստեղծ, աւելի աղուոր պարագաներու մէջ: Ի՛նչ, բոլոր այդ խնկարկումները, այդ առաւապազին պատումները գեթ կնոջ մը համար, որ ժօրժ Սանն է, աղտոտ ու գանեցուցիչ գրադիտուհիի մը համար որ Նօհանի չեմ գիտեր ի՛նչն է: Ո՛ւր կը մնայ ուրեմն սիրոյ այդ բարձր ըմբռնումը, զոր կը պահանջես բանաստեղծներէն: Չկարծես, Սիրանոյշս, որ գիրքը ծայրէ ի ծայր կըցայ կարդալ: Աւտուած չընէ: Աւելի աղէկ է Նաւան տառն անգամ կարդալ ու գոց ընել քան Միւսէէն նամակ մը աչքէ անցընել: Ասոր գայթակղութիւն չեմ ըսեր ես, պարզապէս կը գանիմ, մի՛ մեղադրեր, ատանկ աղտոտ նկարագիրներէն կը խորչիմ»:

Իրաւունքը միշտ ընկերուհիս քովն է, անանկ չէ՞, Զարուհի: Պիտի ըսես որ անանկներն են որ կը յաջողին, ամէ՛ն տեղ ու ամէն գրականութեան մէջ: Բայց ևս ասոր պատասխանը անձամբ պիտի տամ քեզի և նաև քեզի ցոյց պիտի տամ սիրոյ մաքուր ըմբռնում մը, տարփանքի գերագրգռութիւն մը որ երկու էակներու մէջ գոյութիւն ունի ինքնիրեն ծիրող ցաւագին գոհունակութեամբ մը:

Ա՛յնչափ կը խորչինք անկեղծութենէն, և այնչափ փարած ենք սովորականութեան որ զիրար գերազանցող զգացումներու մէջ, մենաւոր հիւծումի մը մէջ կը ձգեն որ հալիս, մաշիս:

ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԼՈՒՌ ՊԱՏՈՒՀԱՆԸ

(ԲՄԱՅԲ)

Ա.

Ամէն բան իր պատմութիւնը ունի, կ'ըսուի, մարդիկ և իրերը: Պատմութիւն մը ունի նաև այն պատուհանը որու դէմ կը գտնուիմ հիմայ: Անոր կեանքը ինծի համար կը ծնի ժամանակամիջոցի մը մէջ, ուր, տեւեռները, ծաղիկները, գերագոյն խինդի օրերէն վերջ, ա՛լ անցեալին կը վերաբերին որոշեալ ատենի մը համար սակայն, քանի որ յաջորդին յղութիւնը կուենան միշտ:

Պարտէզին մէջ սերկելիլի ծառ մը յամառ կեռասներին և ծիրանին մէջտեղ իր տերեւները չէ կուտալած դեռ, չոր ձիւղերուն տակ: Ան խոշոր դեղին պտուղները կը ցուցադրէ կանանչներու մէջ: Պտուղները դեղին, որոնք չուտով քաղուելու, անհետանալու վախը մէկգի, կը ծիծաղին կարծես իրենց զրացիներու, կարմիր սալորներուն և սիրուն ծիրաններուն վրայ: Եւ չես գիտեր ի՛նչպէս, այդ պտուղները տեսնելով, միտքդ կուգան պառաւ աղջիկներ, որոնց թորչումած դէմքերը՝ ժպիտներու տեղ ծամածռումներ ունին, սերկելիլի ծառին անփայլ կանանչութեան պէս և մէն մի ծամածռումը դեղնած լինտերէն դուրս ելած ու պակասած ակունքներ միայն կը ցուցադրեն՝ դետին ծռած այլևս ցանցաւ սերկելիլներուն պէս:

Պարտէզին մէջ աղջիկ մը կը դեգերի, հոս հոն, զրացի տուներու գաղտագողի նայուածքներ կը նետէ ու ծառին կը մօտենայ: Անգամ մը աչքերը կը վերցնէ, պտուղներու առատ եղած կողմը կը փնտռէ: Բաղ մը պիտի ընէ, բայց ի՛նչպէս: Հասակը չներէր՝ ձեռքը երկարելով փրցունելու: Կը մտածէ՝ վեր յառած աչքերը, որոնց առջև հիմայ մէկ հատը մանաւանդ, ինքզինքը կը ցուցադրէ, գետինին էն չափ մօտեցածը. «Եկո՛ւր, կ'ըսէ կարծես այդ պտուղը, եկո՛ւր սիրուն աղջիկ, մահը քու ձեռքովդ՝ քնն»:

քուչ, անուշ քուչն մը ունի ինծի համար, եկո՛ւր, քաղէ՛ փրցո՛ւր զիս, քեզի ըլլամ, քեզի միայն»։ Աղջիկը կը չափէ իր հասակը. «հ, եթէ քիչ մ'աւելի ըլլար, ինչ հաճոյք, պտուղներուն էն համեղը պիտի ունենար։ Միտքը բան մը կուգայ, թեթեւ մը ցատկելու անա դէպի վեր ընդոստ շարժում մը. առաջինն մէջ չը յաջողիր, կերկրորդէ չ'ըլլար, աւելի ուժգին և այս անգամ կը յաջողի բայց... դժբաղդաբար բայց մը կայ. զոր բացատրելու դժուարութիւնը ունիմ։ Բնազդական պարկեշտութեան զգացումը ձեռքերը կապտած է և ձգած սերկելիլը գետին կ'իյնայ. — երկուքի կը բաժնուի։

Կտորները վերցունելէ առաջ, ամօթխած նորէն չորս կողմը կը նայի, և ո՛վ դժբաղդութիւն... երկու փայլուն աչքեր կը տեսնէ, որ զինքը կը պարուրեն ժպիտով մը ծածկամիտ՝ տեսած ըլլաու երջանիկ գոհունակութիւնը սքօղող ժպիտ մը։ Բայց անմեղ բան մըն ալ կայ այդ ժպիտին մէջ, քաջող առինքնող, որ խիստ բնական փախուստի մը տեղ, հիմայ կը մօտեցնէ աղջիկը և քիչ առաջ սերկելիլին փայլուն դեղնութենէն բան մը փոխ առած դէմքին վրայ, թեթեւ վարդ կարմրութիւնովը պատուհանի աղուն կը նետէ պաշտելիօրէն երկու կտորներէ մէկը։

Բ.

Ահա այն օրէն կըսկսի պարտէզով մը զատուած այդ դէմ դիմաց երկու պատուհաններուն պատմութիւնը։ Հիմայ սերկելիլի ծառն ալ նմանած է ծիրանիին և սալորենիին, սակայն չոր ճիւղերն իսկ ունին իրենց հրապոյրը։ Հակառակ ցուրտին, բաց պատուհաններու առջեւ, երկու հոգիներ կան, իրենց կեանքի դարնան մէջ ձմեռը քամահրող, որոնք օրն ի բուն հաճոյք կը զգան անոր աւերները տեսնելէ։ Ու այդ աւերներու մէջէն երբ երկու զոյգ աչքեր իրար կը հանդիպին, ակամայ մէկը սերկելիլին ծառին կը նայի ամօթխած, ու միւսը, անսպասկառ, կրակէ ակնարկներ կը նետէ։

Ու սիրոյ ներմուծումը եղող ձմրան կը յաջորդէ՝ գարունը, ուր ծառը կըսկսի նորէն բողբոջիլ։ Հիմայ կանանչ սաղարթները, բու-

րումնաւէտ ծաղիկները տարապայման հաճոյք մը կ'ընձեռեն։ Անոնց քով գտնուիլը, ամբողջ ցերեկին միակ զբաղումնին կ'ըլլայ եւ գիշերը երբ մութը կ'իյնայ, երկու լուսաշող պատուհանները մէյ մէկ երկար ստուերներու ծնունդ կուտան, ստուերներ, որոնք զիշերին մեծ մասը պարտէզին ճիւղ մէջտեղ կանանչ ճիւղերու մէջ իրարու կը միանան և հոն կտուց կտուցի, բոյնի մէջ քնացող սիրուն թռչուններու նման կարծես, բաներ մը կը փափսան իրարու ակնաջի եւ օրուան դէպքումները կը խտացնեն, յաջորդին փափաքները կը հաղորդեն, ապագային երազները կը կազմեն։

Ու քնանալու ժամը կը հասնի. կոպիտները ուռած են ու անքնութիւնը արեան թեթեւ բծաւորումներ կը մաղեցնէ աչքերուն մէջ. բայց որո՞ւ հոգ։ Շատ անգամ, հո՛ն, պատուհաններուն եղերքը յենած՝ առտուան զով օդը միայն յուշարարը կ'ըլլայ իրենց մրափումին ու ընդոստ, տեսնուելու վախէն բռնուած, վարագոյրներն են որ յետին ժպտի մը մէջ կը գոցուին, քանի մը ժամ վերջ նորէն բացուելու համար։ Իրենց էն շուարճալի պահը հագուելու ժամանակն է։ Երկու պատուհանները իրենց պատմութեան այդ մասը ծածկել կ'ուղէն մեզմէ։ Ո՛վ գիտէ, ինչե՛ր պիտի ըսէին, եթէ կոյս ամօթխածութեան պէտք եղած հարկը վճարելու ստիպուած չ'ըլլային։

Գարունն ալ կ'անցնի սակայն խիտ տեսնելներու մէջ. հիմակ ձերմակ ծաղիկները կանանչ կըրուրութիւններու փոխուած են։ Տաքը կըսկսի, արեւը պատուհաններուն փեղկերը կիսովին գոց կը պահէ։ Սակայն կայ բացուածք մը երկու փեղկերուն միանալիք տեղը եւ այդ բացուածքին ետեւէն աչքեր որ զիրար իր լափեն։

Պատուհանները ողորմասիրութիւնը ունին դեռ, իրենց սիրուն օժանդակութիւնը ընծայելու սիրող սրտերուն։ Սակայն այդ բացուածքն ալ հետզհետէ կը նեղնայ. տաքը սոսկալի է, քաղաք կենալը անկարելի։ Եւ օր մը ահա պատուհան մըն է որ ամբողջովին կը գոցուի, լուռ կը մնայ։

Գ.

Աղջկան ընտանիքն է նախ որ օգտափոխութեան կ'երթայ: Բաժանումը ծանր է. սրտակեղէք՝ բայց անհրաժեշտ: Պատուհանները ներկայ կ'ըլլան խոստոտոմներու էն անկեղծին. «նորէն միանալու», իրենց մէջ նորէն զանոնք ընդունելու պատրաստակամութեամբ կ'երաշխաւորեն այդ խոստումը: Բայց հեռուն իր մէջ անակնկալներ ունի: Առաջին արտօսընդհանրէն են որ կը կազմուին: Յարդ ըմբոյշանումը միւրոյ պղատոնական հաճոյքին ուրախութիւնները կը կորսնցնեն իրենց արժէքը, ներկային ցաւը կը գլէ, կ'անցնի ամէն ալ: Խնչ արժէք կրնար ունենալ սիրոյ կեանքը, երբ այսպէս շուտով վերջ մը զայն պիտի խանգարէր կըսուի: Ու ցաւը, կոտորանքը, նոյնիսկ ըլլայ ժամանակամիջոցի մը համար, զիրար կորսնցնելու ցաւը դուրս կուգայ աչքերէն: Անոնց անկիւնէն յորդող չիթերը, յուզմունքներու մէջ կրակներու պէս այրող գէմքերու վրայ դեռ չըթունքներու ծայրի փոսիկներուն հազիւ ուրեմն հասած կը շոգիանան, կը շոգիանան, միշտ, առանց դադարի, հանգրուանի, վայելելու յոյսերուն հետ մէկտեղ:

Յաւին սաստկութիւնը սակայն, պատուհանին ամբողջովին գոյուելէն վերջն է որ աւելի կը շեշտուի:

Հիմայ լուսադարդ ամառ գիշերի լուութեանը մէջ մէկ հոգի միայն կայ, պատուհանի մը եզրը յենած. դիմացինը լուռ է ու հոն միթութիւնը աւելի խոր:

Լուսնի աղօտ լոյսին տակ, կէս մը փայլող յարդագոյն պատին մէջտեղ, ուրուական մըն է կարծես այդ լուռ պատուհանը, որ ալ հինցած օրերու, սիրոյ արքունանքին նախկին անխառն ուրախութեանց համար, տգեղ ժպիտ մ'ունի: Տարի մը գրեթէ ուրախացնելէ վերջ էակ մը, հիմայ կը ցցէ իր ակառները—սեւ, ուռած, դուրս ինկած բազրիքանման շարայարումները փեղկի դռնակներու—ու կը խնդայ: Սարսռոտ բան մը կայ այդ խնդուքին մէջ, որ արիւնը կը սառնեցնէ մարդուս: Լոյսի խուրձ մը կամ մոմի մը ճառագայթները կը յուսացունին վայրկեանէ

վայրկեան ու այդ լոյսի մեղմ կամ աչքառու շողիւններուն մէջ մէկը, մէկը որ կեանքն է երկու պատուհաններուն միանգամայն: Ու այն լոյսը որ կըսպասուի ու այն ճառագայթը որ միեւնոյն ժամանակ ճառագայթներ պիտի ծնցնէ ամպամած հակառի տակ, արտօսընդհանրու շոգիներուն մէջ մռայլոտ աչքերէն, չի գար, չի տեսնուիր ու խտաւորուած շոգիներու ընդմէջէն, միայն սեւ, սեւ զանգուած մըն է ուռած, ցցուն ակառներն են որ կը տեսնուին:

Արշալոյսով իրաւ կ'անհետի այդ սեւ, այդ հեգնող ակառները պարզ փայտի կտորներ կ'ըլլան դարձեալ և սակայն միայնութիւնը նուազ զգալի չ'ըլլար լուութեան մը հետ որ կարծես վերջնական է, և խեղճ լուռ պատուհանին սիրային պատմութեան մէկ հատորը կը վերջացնէ:

ՊԱՐԷՏ

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՊՍԱՆԱՍԵԱՆ ՏԵՂԵԱՍԳԻՐԸ

Կարնոյ Սանասարեան վարժարանին Կ. Պոլսոյ Խնամակալութիւնը հրատարակեց այդ կրթական հաստատութեան ուսումնական վիճակին և մատակարարութեան քսանամեայ տեղեկագիրը (1881է 1901) որ կը բովանդակէ միանգամայն բարեյիշատակ Մկրտիչ Սանասարեանի լուսանկար պատկերը: Հարիւր լայնադիր էջերէ բաշկացած տետրակ մըն է այս տեղեկագիրը, ժե գլուխներու բաժնուած, ներածութենէ մը և Լնդհանուր Տեսութենէ մը զատ: Առաջին երկու գլուխները կը պարունակեն Սանասարեանի կենսագրութիւնը և անոր կտակը: Յետոյ իրարու կը յաջորդեն, Վարժարանին ծրագիրը, անոր յատկացած շէնքերը, ուսուցչական մարմին եւ աշակերտներ, արհեստանոց, վարժարանին ներքին կեանքը, տարեկան քննութիւններ ու շրջանաւարտներ, տօներ եւ հանդէսներ, ուսումնական միջոցներ, հասոյթք եւ ծախք, կալուածները, վար-

ժապետոցներու յատուկ դրամագլուխ, նուրբատուութիւններ:

Այս քսանամեայ շրջանին մէջ, Սանասարեան վարժարանը ընծայած է 110 ընթացաւարտ, որոնց 94ը Ուսումնական ճիւղէն և 16ը Արհեստագիտականէն: Ասոնցմէ 23ը ուսուցիչ եղած են, 12ը ուսանող համալսարաններու մէջ, 26ը առեւտուրով կը զբաղին, 11ը պաշտօնեայ են կառավարական կամ զանազան հաստատութեանց մէջ, 19ը արհեստաւոր, երկրագործ, 12ը փաստաբան, գծագրիչ եւայլն, 1ը եկեղեցական եւ 7ը մեռած են:

Բնանամեայ շրջանին ընդհանուր գումարը եղած է 7,131,701 զր. որ բաժնուելով այդ երկար ժամանակամիջոցին մէջ Սանասարեան վարժարանէն անցնող 2337 աշակերտներուն վրայ, իւրաքանչիւր աշակերտի համար 70,461 զր. ծախք եղած կ'ըլլայ (օսմ. ոսկին 103 զր. ի հաշուով): Այդ մօտաւորապէս եօթնուկէս միլիոն զրուշին երեքուկէս միլիոն զր. և հօգացուած է Հիմնադրին կողմէ՝ իր կենդանութեանը, եւ իր մահէն ետքն ալ իր կտակած դրամագլխին հասոյթով. իսկ մնացեալը, երեք միլիոն զր. է աւելի, հօգացուած է աշակերտներուն թոշակներէն, արհեստանոցի աշխուժէն եւ ուրիշ զաւան հասոյթներէ:

Տեղեկագիրը կը պարունակէ նաեւ պատկերը Սանասարեան, վարժարանին, ծառադարձ եւ բարձրագիւր ընդարձակ շէնք մը որուն պարտէզին մէջ հետդնտէ կառուցուած են քանի մը յարակից մասեր, զլիսաւորաբար Արհեստանոց մը՝ 1887ին: Այդ թուականէն է որ Արհեստանոցը ստացած է յատուկ կազմակերպութիւն, նախ կոպղարարութեան եւ յետոյ ատաղձագործութեան մասնագէտ ուսուցիչներով: 1887էն 1901, Արհեստանոցը ունեցեր է 16 շրջանաւարտ որոնցմէ 7ը կոպղարար եւ 9ը կահագործ եւ արտադրեր է զանազան կահեր եւ երկաթեայ առարկաներ: Իսկ կազմարարութեան ճիւղին հետեւած են վարժարանին աշակերտներէն ոմանք:

ԱՂԶԿԱՆՑ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՒԼԵՃ

(Ի Ս Կ Ի Տ Ա Ր)

Աղջկանց Ամերիկեան Գուլէճի յառաջիկայ տարեշրջանը կը սկսի սեպտ. 15ին: Գեշերօթիկ աշակերտուհիները Գուլէճ կը սպասուին 14ին: Հաստատութեան շէնքերն օժտուեցան կեդրոնական ջեռուցիչով մը, որ յաւանքս կը նպաստէ գիշերօթիկներու վիճակին հանգստաւետութեան: Ուրիշ բարեօրոգումներ ալ պիտի ըլլան տարւոյն ընթացքին մէջ: Աւելի տեղեկութիւն ուղղոյնք դիմելու են նամակով Գուլէճին նախագահին, կամ Սեպտ. 1էն ետքը անձամբ երթալու են Գուլէճ: Կը խնդրուի նամակները շրկել անգլ. նամակատան խնամքով:

4—10

ԼԱ ՖՈՆՍԻԵՐ

LA FONCIÈRE

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հրդեհի, կեանքի եւ փոխադրութեանց

Դրամագլուխ 60,000,000 ֆր.

Սոյն ապահովագրական հանրածանօթ ընկերութեան կեդրոնական Տնօրէնութիւնը կը գտնուի Բարիզ եւ Դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Թուրքիոյ ճիւղին համար Ընդհ. Տնօրէնն է Պ. Սիւլվէն Միլ եւ գրասենեակները կը գտնուին Ղալաթիա, Պէրէքէթ խան, Թ. 10—11:

ԼԱ ՖՈՆՍԻԵՐԻ ապահովագրական ընկերութիւնը՝ ինչպէս հրդեհի եւ առեւտրական փոխադրութեանց, նոյնպէս կեանքի ճիւղին համար յոյժ նպաստաւոր պայմաններ կը ներկայացնէ իր բաղմամբիւ յաճախորդներուն զորս միշտ գոհ թողուցած է:

ՅԱԶՈՐԴԻ ԹԻԻՈՎ

Միսի Կարիյներ

ՉԻՖԹԷ-ՍԱՐԱՖԷ

ՍՏԱՑԱՆԻ Դաւթեան Գործակալութեան երկու հրատարակութիւնները, Գեղանից Ֆրանսից, սիրովէս Իզմիրի կեանքէն, հեղինակութիւն Օր. Մէրի Ս. Աղասեանի և Մայրենի Լեզու (Բ. տարի) որ իր պարունակած բարոյակից հատուածներով և պիտանի գիտելիքներով սահմանուած է փոքրիկ տղոց ներշնչելու բարոյական լաւագոյն սկզբունքներ և զարգացնելու անոնց միտքը, Դաւիթ Իզմիրցի Օրիորդին վիպակին, բաւական հետաքրքրաշարժ գործ մըն է որուն մանկամարդ հեղինակուհին կը գրէ իր նախաբանին մէջ. — «Յորչափ կնոջ մը սիրաւ խորհրդաւոր պիտի մնայ, ցորչափ երկուքին՝ մէկի վերածումը մշտադաւար նիւթ մը պիտի մնայ մարդկութեան մէջ, ներկայ սիրովէս թերեւս խորհողներու համար չըլլայ անօգուտ»:

ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԻԻԹԱՐԵԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆ

Ի ՔԱՆԿԱԼ ԹԻ

48-րդ ՏԱՐԵՇՐԱՆ

Վարժարան վերստին կը բացուի 1/14 սեպտ. 1904:

Վարժարան ունի արդի երկրորդական դպրոցներու (école secondaire moderne, Realschule) Ծրագիրը՝ միջ-վայրիս պիտայից յարմարեցում:

Լեզուներ. — Հայերէն, Թուրքերէն, Գողղերէն, Գերմաներէն, Անգլերէն: Դիսցիպլիններ. — Ուսողական, բնագիտական, բնապատմական, պատմական, (հաւանդուի, Գողղ. եւ Գերմ. լեզուներով):

Առեւտրական Աշխարհագր. Թուարան. Թղթակցութիւն (Գերմ. Գողղ. Անգլիէրէն):

ՈւՍՈՒՑԻՉՆԵՐ. — Ներքին եւ արտ. քիմ. 20 ուսուցիչներ պիտի դաստիարակեն:

Նարմաւա աշակերտաց ընդունելու թիւն Օգոստ. 16էն կը սկսի:

ՎԱՐԻՉ

Հ. ԳԱԲՐԷԼ Ծ. Վ. ՄԷՆԷՎԻՇԵԱՆ

3—10

ՌՕՊԵՐՐ ԳՕԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 2/15ին: Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բարձրացուած կատարելութեամբ աւանդելու համար: Վարժարանին մասնաւոր բժիշկը՝ ուսանողներու առողջութեան, մարմնամարդներուն և խաղերուն, ինչպէս նաև վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ կը հսկէ: Մարմնամարդի նոր և գեղեցիկ շէնք մը կառուցուած է նորոգւած, իր մէջ ունենալով մարմնամարդի աւելն տեսակ գործիքներ, վերջին դրութեանց համաձայն: Երկու տարիէ ի վեր բացուած է նաև փոքր տղոց յատուկ նոր շէնք մը, ուր կ'ընդունուին մինչև տասը տարեկան աշակերտներ:

6—10

ՀԱՅՈՒՀԵԱՑ ՎԱՐժԱՐԱՆ

ԱՏԱԲԱԶԱՐ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 2/15ին: Եւ. առաւօտ: Գիշերօթիկներու տարեթուական է 12 օմ. ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ. մէջ, և կէսը Յունուարի մէջ: Շաբաթը դաշնակի մէկ դասի համար տարեկան 3 օմ. ոսկի և երկու դասի համար 5 օմ. ոսկի աւելի կը պահանջուի: Երգեհոնի դաս առնողները տարին 1 ուկէս ոսկի աւելի կը վճարեն: Վարժարանին յայտագիրը ուղղողներուն ձրի կը ղրկուի: Ուրիշ տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի, Պայպըլ—Հաուս, Կ. Պոլիս, կամ գրել Տոքթ. Ս. Էֆ. Դավալճեանի, ատենապետ խնամակալութեան, Ա. տալաղար:

6—8

Հիմնադիր—Արսոնաեք Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
Պատասխանատու—ՏՈՐԷՆ ՏՈՔԹ. ԵԴ. ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՄ. ԹԱԳ. ՍՈՒՆՆԱՇՆՈՐ ՀԵՍԱՆԱԳՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիճենս)

ՊԱՏՈՒՍԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՒԹՅԱՆ ԼՈՒԻՍ ԶԵ ՊԱՎԻԷՐ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏՐԻՏ)


Ապահովագրութիւն կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւորութիւնն է ի Կ. Պոլիս, Քոնստ. Լիօնէ

Ընդի. եւ լիազօր. ներկայացուցիչ Թուրքիոյ

Զ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հաճօրույ խան, Թ. 52-53-54-55-56 7-10



Անկարկի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, լայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է:

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՄ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի, ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

- | | | |
|--|--|--|
| ՍԻՆԿԷՐԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐ
ՆԱԽԱԳԱՀ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ | ԲԵՐՍԷ | 1. Մեծ փողոց, Պոն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| | ԿԱՆԱԹԱՆ | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | 1. Սուլթան Համամ, Թ. 51 | |
| | 2. Սուլթան Պէյաղլա, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. | |
| ՍԿԻՐՏԱՐ | | Զարչը Պոյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

կատարեալ երաւիաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկեր Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղզուրի տունը:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ



1881 մարտ 20ի Կայս. Ուլազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ- ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՒՈՎ ՈՒՂԵՒՈ- ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կայս- րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան 137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա- գլուխ եւ վնասուց հատուցում 282,000,000 »

1902 տարւոյ մէջ զանձուած ապահովագրին եւ տոկոս 54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, 6 10

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օծիսի, արկածի, ցման բռնակի ճիւղեր

V I C T O R I ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛
D E բոլորական քննութեամբ եւ թէ առանց բոլորական քննութեան
B E R L I N Առանց բոլորական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
բուն վճարումները չաբարակա՛ն մասնավճարներով տեղի կունենան,
սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1903ին Ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ին » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար- ՀՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

այ՝ 36 հրովարակով եւ ուղղակի Օսմ. Կայս Պանքա

կառավարութեան հսկողութեան ներ- եւ Քրէտի Լիոնէ

բել:

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՅԱՅԵԱՆ

Տեսուչ

Պոլիս Քաբըրքոզլու խան

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷՉԷՃԵԱՆ

Քիւ 45 եւ 45 Ե.

6--10

ՆՈՐ ԲԱՌԱ ԳԻՐԳ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ

Պատկերագիր 1000 հաւելի հզօրեհ

բաղկացած

ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՃԵԱՆ

Նախնեաց բառերու նորաբանութիւններ,
— գաւառական բառեր հանրագիտական
հատուածներ, երկրագործութեան, գիտա-
թեանց, դիցաբանութեան, առողջաբանու-
թեան, օրինագիտութեան, ճարտարութեան:

Գործնական կենաց վրայ:

Հայերէն լեզուի բառական ճօխ եւ դի-
րաւոր բառադրքի մը պէտքը ընդհանուր
եղած էր ցարդ: Ահա այդ պէտքը լրացնե-
լու կոչուած է որչա՛ս գործն., օգտակար իմ
եւ օտար բաղմութիւ բառադրքերէ: Խնամ-
քով հետազօտուած են բառերու ճշգրիտ
նշանակութիւններն, անոնց որոշ եւ ամփօփ
սահմաններն, իրենց հականիշերով ու հա-
մանիշերով, հին ու նոր պէսպէս առում-
ներով: Զանց չէ առնուած նաեւ դնել բա-
ռերու ծագումն, կենդանեաց, բուսոց ո՛ր

դասակարգութեան վերաբերիլը, ի հարկին
անոնց թուրքերէն ու ֆռանսերէնն եւս:

Բացի բուն բառադրքէն՝ գործոյս ամբողջ
ընթացքին մէջ հանրագիտական հատուած-
ներ կարեւոր տեղեկութիւն կուտան երկրա-
գործութեան, գիտութեանց, դիցաբանու-
թեան, առողջաբանութեան, օրէնսգիտու-
թեան, ճարտարութեան, գործնական կենաց
վրայ:

Հրատարակուած են առաջին երեք թերթերն
եւ միւսներն ալ յաջորդաբար կ'անշնաւորա-
պէս լոյս պիտի տեսնեն: Թուրք ազնիւ եւ
սպաւորութիւն ընտիր եւ խնամեալ զարդա-
րուած յատկապէս փորագրուած օրրուն եւ
ճաշակաւոր պատկերներով:

Բացուած է բաժանորդագրութիւն հանրա-
քին քաջալերութեան արժանի որչա՛ս գերազան-
ցապէս օգտակար գործոյն համար, 20 դա-
հեկան, Պոլսոյ, 25՝ գաւառաց, թղթատարի
ծախուց համար եւ 6 ֆաթ օտար երկիր-
ներու համար:

Հեղինակին հասցէն՝

Կ. Պոլիս, Հաճօրուլօ խան, թիւ 24

7—10

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն,
Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած
բարմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն,
որոնք ամրան եղանակին յարմարագոյն ըմ-
պելին են:

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու,
Ճէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր թուրքիոյ
գլխաւոր քաղաքներուն մէջ,
նոյնպէս Նգիպառո:



ԱՊՍՈՒԿ ՎԱՃԱՌՈՒՄ ԿԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տե-
սակ գոհարեղէններ ունե-
նալ, աժսն ու ճաշակա-
ւոր, թէ՛ արեւելեան եւ
թէ՛ եւրոպական ճաշակով
պատրաստուած, ժամա-
ցոյցներ, արծաթեայ գա-
ւազաններ եւ այլն, դիմե-
ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շու-
կան, Մեծ-փողոց թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար
100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնո-
ղին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած
գոհարեղէնները եթէ մնաստուած չեն՝ 100ին
10 զեղչով եւս կ'առնուին: Իսկապառիկ գրո-
նոդներէն՝ 100ին 15 զեղչով:

7—10

ԳԵՂԱՐԱՆ

ԽԱՉԻԿ ՖԷՍՃԵԱՆ

Կ. Պոլիս, Մահմուտ փաշա Պաշի, Ապուս Է.Թ.Ի. խանին դեմ 261

Սոյն բազմամեայ դեղարանը, այս անգամ նոր կազմակերպութենէ մը ետքը, խալիկ Ծէսճեանի կողմանէ, թիչ ատենուան մէջ պատիւը ընկեցաւ գնահատելու արդայ հասարակութեան, որմէ քաջաբերուելով պէտքը կըղգայ իրեն ըզղուծիւնը եւ նպատակը ներկայացնել հաւորութեան:

ՆՊԱՏԱԿ. — Գոհ ձգել իր յաճախորդները միշտ դեղերու թարմութեամբ, դեղագրիւնը արագ եւ ճշգրտօրէն պատրաստութեամբ, գնելու չափաւորութեամբ եւ արուեստին խղճամբ գործադրութեամբ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ. — Մաքրութիւն, ապանկաման դրութիւն եւ պարկեշտութիւն գեղարանին ձկգրունք եղած են:

Եւրոպական տան մը հետ բանակցած ըլլալով ամէն շարժու պատուաստի թարմ քիւպեր (աքր գալեմի) կը հասնին բարդայով, Բացի ասկէ կը գտնուի օսմանեան եւ եւրոպական նոր եւ միշտ թարմ դեղեր եւ մասնադեղեր, ի մէջ ասոց Մալակայի եւ Պոնտօյի գինիներ, տեղական եւ Եւրոպական ամէն տեսակ թարմ հանքային ջուրներ, Գօլնեանի եւ քաքաւի ջուրներու ալ խառն տեսակները եւայլն, իսկ միջառապան փոշիին ամէնէն աղդեցիկ տեսակէն միշտ պատրաստ կը դնուի:

Ամէն օր Դեղարան յաճախող Հայ եւ օտարազգի բժիկներէն, յիշէնք մասնաւորաբար հանրածանօթ Բժիշկ Ա.Լ.Լ.Զ.Վ.Ե.ՐՏԻ Է.Ծ. որ ամէն Գլ. Ել. Ծր. օրեր ժամը 8—11 իրեն դիմող հիւանդները կը դարմանէ իրեն ծանօթ փորձառութեամբ եւ մասնագիտութեամբ, դեղարանին մասնաւոր դարմանասրահը, Դեղարանը ընկնաւ ԳիշերՍ.Յ.Ի. ՍՊԱՍ 3—10

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Տոքթ. Բ. Էմիրզէ, որ իր բժշկական ուսումը կատարելագործած է Բարիդի մէջ եւ 15 տարիէ ի վեր մեծ փորձառութիւն չահած է, առիթ հաստատուած է, Բերա Պէոյիւք Բարմաք Դարու, Թիւ 16: Մասնագէտ է մանկաբարձութեան եւ կանացի հիւանդութեանց եւ ատենցմէ զատ նորագոյն մեթոտներով կը բուժէ ջղախիւն եւ հոգեկան ամէն կարգի հիւանդութիւններ ինչպէս նաեւ արգանդախցումէ (hystérie) առաջ եկած հիւանդութիւնները, մասնակի անդամալուծութիւն եւ կտրկամութիւն եւայլն: Ասկէ զատ, օսկորի եւ ուղեղական խոլը (սրբաճ), առանց գործողութեան նոր դրութեամբ մը կը դարմանէ, տեղը առանց յայտնի ընելու Տօքթ. Էմիրզէ էֆ. կը գտնուի. Բերա Պէոյիւք Բարմաք Դարու, Թիւ 16 տան մէջ, ուր կիրակիէն զատ ամէն օր կէսօրէն յետոյ ժամը 1էն մինչեւ 4 (Ը.Ե.) հիւանդ կ'ընդունի, եւ ուրքաթ օրերն ալ ձրիաբար ըկդարմանէ հիւանդները:

7—10

ՏՈՔԹ. ԲՈՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պոլսոյ Կայո. Բժշկական վարժարանին, անդամ Բարիդի Բժշկական համաժողովին: Մասնագէտ արանց եւ կանանց ծննդական գործարան, ներու հիւանդութեանց: Պատուով կոչուող իր ունի Պերլինի, Լոնտոնի, Բեռլինի եւ ուրիշ երկիրներու Ակադ. միւնիսթրի: Հնարիչ բժշկական գործիքներու եւ հեղինակի մասնագիտութեան վերաբերեալ գործերու:

Հիւանդ կ'ընդունի՝ Պոլսոյ կողմը կամուրջին դէմի անկիւնը, իր դարմանատան մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն, իսկ Բերա, Թաքսիմ, Փրանսական հիւանդանոցին դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.)

7—10